ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թվականի հունվարի 15-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5բ դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները: Ժողովը վարում էր դասղեկ Իսկուհի Ասատրյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում.

ա) ուսման առաջադիմությունը

բ) հաճախումների արդյունքները

գ) տետրերի և դասագրքերի վիճակը

ե) դասարանի սանիտարական վիճակը և գույքի պահպանումը

է) 2-րդ կիսամյակի անելիքները

2. Ընթացիկ հարցեր (էքսկուրսիաների կազմակերպում,կարգապահություն, վարք և այլն):

Ա. Լսեցին՝

Օրակարգի առաջին հարցը, որի վերաբերյալ ելույթ ունեցավ դասղեկ Իսկուհի Ասատրյանը : Նա ամփոփ ներկայացրեց դասարանի 1-ին կիսամյակի արդյունքները: Դասարանում ունեն 2 գերազանցիկ՝ Մանուկյան Էլեն և Սարգսյան Մարի , 4 հարվածային՝ Դավթյան Միլենա, Կարապետյան Սյուզաննա,Հովսեփյան Նարե, Մարտիրոսյան Միլենա:

Աշակերտների բացակայությունը 1-ին կիսամյակում կազմում է 193 ժամ:

Դասղեկը հետևողական է եղել հերթապահության, հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարել են կարգապահական շեղումներ: Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները:

Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող ու հետ մնացող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման հետ կապված հարցերը:

Որոշեցին՝

Դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքները դասարանում գնահատել բավարար:

Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու և կարգապահության հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին:

Ավելի հաճախ լինել դպրոցում, կատարել դասալսումներ՝ աշակերտների կարգապահությունը և վարքը բարձր մակարդակի վրա դնելու համար:

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված աշակերտների կուլտուրական մակարդակի բարձրացման, գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման հետ (կոլեկտիվ կինոդիտում, այցելություն թանգարաններ ու թատրոններ, ներդպրոցական միջոցառումներ և այլն):

Ծնողական խորհրդի նախագահ՝ ..... (Մ.Ծառուկյան)

Քարտուղար՝ ..... (Ա.Փանոսյան)